

ՀՏՂ՝ 93.94,726

DOI: 10.52971/18294316-2023.26.1-130

ՃԱԿՔ ԳԱՎԱՌԻ ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ
ՏԵՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԻ ՇՈՒՐՁ¹

Արկաղի Ա. Ակոպով

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ

Դավիթ Ս. Նահատակյան

ՃՇՀԱՀ, ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ

Սոֆյա Պ. Հակոբյան

Անկախ հետազոտող, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Պատմական Մեծ Հայքի Տայք նահանգի հյուսիսային Ճակք գավառը տեղագրվում է Օլթի գետի միջին և ստորին հոսանքի շրջանում՝ Օլթի գետի և նրա աջակողմյան վտակների ավազանում: Ճակքի հարուստ պատմամշակութային ժառանգության լավագույն նմուշներն են Իշխանաց գյուղի Ներսեսաշեն տաճարը, Վաչեձորի վանական համալիրը, Մամիկոնյան նախարարական տան հայտնի ամրոցներից Էրախանին, Փանազկերտի և Նորբերդի ամրակուռ բերդերը: Մեթոդներ և նյութեր. Աշխատանքում կիրառվել են պատմահամեմատական, ինչպես նաև սկզբնաղբյուրների համադրության և վերլուծության մեթոդները: Վերլուծություն. Աշխատանքում ներկայացված են Մեծ Հայքի Տայք աշխարհի Ճակք գավառի պատմաճարտարապետական հուշարձանները, որոնց մեծ մասը ոչ միայն հանիրավի անուշադրության է մատնված հայագիտության մեջ, այլև առհասարակ հայտնի չէ: Կատարվել են հուշարձանների տարածաչափական ուսումնասիրություններ և ընդհանուր կերպարային վերլուծություն: Արդյունքներ: Ուսումնասիրության մեջ հստակեցվել է գավառի գրեթե բոլոր հուշարձանների տեղագրությունը: Կատարվել է 2022 թ. իրականացված դաշտային աշխատանքների արդյուն-

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ 21T-2A292 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

քում ստացված նյութերի և գրականության մեջ առկա տվյալների համեմատական վերլուծություն: Հստակեցվել են հուշարձանների ճարտարապետական ձևերը: Հեղինակների ներդրումը: Հոդվածը գրվել է հեղինակների համատեղ ջանքերով: Պատմական մասը հեղինակել են Ա.Ակոպովը և Ս.Հակոբյանը, ճարտարապետական մասը՝ Դ.Նահատակյանը:

Բանալի բառեր՝ *Տայք, Ճորոխ, Իշխան, Վաչեձոր, Փանագլերտ, Բերդ, Եկեղեցի, մզկիթ*:
Ինչպես հղել՝ Ակոպով Ա., Նահատակյան Դ., Հակոբյան Ս., Ճակք գավառի պատմաճարտարապետական հուշարձանների տեղագրության և արդի վիճակի շուրջ // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023: Ն. 1(26): 130-142 էջեր: DOI: 10.52971/18294316-2023.26.1-130

ON THE LOCATION AND CURRENT CONDITION OF THE HISTORICAL AND ARCHITECTURAL MONUMENTS OF CHAKQ PROVINCE

Arkadi A. Akopov

Shirak Center for Armenological Studies NAS, Gyumri, RA

David S. Nahatakyan

NUACA, Shirak Center for Armenological Studies NAS, Gyumri, RA

Sofia P. Hakobyan

Independent researcher, Yerevan, RA

Abstract

Introduction: The northern Chakq region of the Tayk province of historical Greater Armenia is located in the middle and lower reaches of the Olti River basin. The best examples of the rich historical and cultural heritage of Chakq are the temple of Ishkhan, the Vachedzor monastery complex, Erakhani - one of the famous fortresses of the Mamikonian ministerial house, the fortresses of Panazkert and Norberd. **Methods and materials:** Historical-comparative, as well as the methods of combining and analyzing primary sources were used in the work. **Analysis:** The work presents the historical-architectural monuments of the Chakq region of Tayk province, most of which are not only completely neglected in Armenology, but also not known in general. Spatial osteometric studies of the monuments and general character analysis were carried out. **Results:** In the study, the topography of almost all the monuments of the province was specified. A comparative analysis of the materials obtained as a result of the field work carried out in 2022. The architectural forms of the monuments have been specified. **Authors contribution:** The article was written by the joint efforts of the authors. The historical studies were contributed by A. Akopov and S. Hakobyan, the architectural part by D. Nahatakyan.

Key words: *Tayk, Chorokh, Ishkhan, Vachedzor, Panazkert, fortress, church, mosque.*

Citation. Akopov A., Nahatakyan D., Hakobyan S. On The Location And Current Condition Of The Historical And Architectural Monuments Of Chakq Province. // «Scientifik works» of SCAS NAS RA. Gyumri, 2023. V. 1(26). 130-142 pp. DOI: 10.52971/18294316-2023.26.1-130

О РАСПОЛОЖЕНИИ И СОВРЕМЕННОМ СОСТОЯНИИ ИСТОРИЧЕСКИХ И АРХИТЕКТУРНЫХ ПАМЯТНИКОВ ПРОВИНЦИИ ЧАКК

Аркадий А. Акопов

Ширакский центр арменоведческих исследований НАН, Гюмри, РА

Давид С. Наатакян

НУАСА, Ширакский центр арменоведческих исследований НАН, Гюмри, РА

София П. Акопян

Независимый исследователь, Ереван, РА

Аннотация

Введение: Северный регион Чакк провинции Тайк исторической Великой Армении расположен в среднем и нижнем течении реки Олти, ее правых притоков. Лучшими образцами богатого историко-культурного наследия Чакка являются храм в селе Ишханац, монастырский комплекс Вачедзор, Эрахани - одна из известных крепостей нахарарского дома Мамиконян, крепости Паназкерт и Норберд. **Методы и материалы:** В работе использовались историко-сравнительный, а также методы объединения и анализа первоисточников. **Анализ:** В работе представлены историко-архитектурные памятники Чакка, большинство из которых не только совершенно не изучены в арменоведении, но и вообще не известны. Проведены пространственные остеометрические исследования памятников и анализ их общего характера. **Результаты:** При исследовании уточнена топография почти всех памятников провинции. Проведен сравнительный анализ материалов, полученных в результате полевых работ, проведенных в 2022 г., и данных, имеющихся в литературе. **Вклад авторов:** Статья написана совместными усилиями авторов. Авторы исторической части - А. Акопов и С. Акопян, архитектурной - Д. Наатакян.

Ключевые слова: Тайк, Чорох, Ишхан, Вачедзор, Паназкерт, крепость, церковь, мечеть.

Как цитировать: Акопов А., Наатакян Д., Акобян С. О расположении и современном состоянии исторических и архитектурных памятников провинции Чакк.// “Научные труды” ИИЦАИ НАН РА. Гюмри, 2023. Т. 1(26). 130-142 сс. DOI:10.52971/18294316-2023.26.1-130

ՆԱԽԱԲԱՆ. Պատմական Մեծ Հայքի Տայք նահանգի հյուսիսային ճակք գավառը տեղագրվում է Օլթի գետի միջին և ստորին հոսանքի շրջանում՝ Օլթի գետի և նրա աջակողմյան վտակների ավազանում: Հյուսիսից այն սահմանակից է Գուգարքի Կղարջք գավառին, արևմուտքից՝ Ճորոխ գետով բաժանվում է Տայքի Արսեացփոր գավառից, հարավից հարևան է Տայքի Ագորդացփոր և Բողխա գավառներին, արևելքից՝ Տայքի Բերդացփոր և Կող գավառներին: Օսմանյան տիրապետության շրջանում ճակք գավառի տարածքում ձևավորվում է նոր վարչամիավոր՝ Տայոցքարի սանջակը՝ նույնանուն կենտրոնով, որն ընդգրկվում է Ախալցխայի, իսկ 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո՝ Էրզրումի նահանգի մեջ:

Ճակք գավառի բնակավայրերի տեղանունները միջնադարում գավառի գրեթե համատարած հայաբնակ լինելու լավագույն առիավատյան են: Ճակքը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով՝ եկեղեցիներով, բերդերով և ամրոցներով, ինչպիսիք են Իշխանաց գյուղի Ներսեսաշեն տաճարը, Վաչեձորի վանական համալիրը,

Մամիկոնյան նախարարական տան հայտնի ամրոցներից Էրախանին, Փանազկերտի և Նորբերդի ամրակուռ բերդերը և այլն:

Գավառի տարածքում պահպանվել են հայկական մշակութային ժառանգության բազմաթիվ հուշարձաններ: Մի շարք եկեղեցիների և վանքերի պատերին պահպանվում են հայատառ արձանագրություններ կամ թվագրումներ: 2022 թ. հուլիսին մեր գիտարշավի ընթացքում մենք այցելեցինք այս հուշարձանների առյուծի բաժինը, որտեղ կատարեցինք հուշարձանների հստակ տեղագրում, լուսանկարահանումներ և սխեմատիկ չափագրություններ:

Փ ա ն ա զ կ ե ր տ

Պատմական Տայքի Ճակք գավառի Փանազկերտ գյուղը գտնվում է ներկայիս Էրզրումի նահանգի Օլուրի գավառակի նույնանուն կենտրոն բնակավայրից 21 կմ հարավ-արևելք և տեղագրվում պատմական Ճակք գավառի արևելյան հատվածում՝ Կող և Բերդացվոր գավառների հարևանությամբ: Փանազկերտ բնակավայրը զբաղեցնում է բավականին ընդարձակ տարածք: Տարածաչափական բոլոր լուծումներով համընկնում է հայկական բնակավայրաշինության հիմնական սկզբունքներին: Փանազկերտ անունով երկու բնակավայր կա՝ Վերին և Ներքին, որոնք գտնվում են իրարից 4 կմ հեռավորության վրա և սկզբնաղբյուրներում հիշատակվում են որպես առանձին գյուղեր [13, էջեր 370, 372]:

Ներքին Փանազկերտում (այժմ՝ Aşağı Karacasu)՝ գյուղի արևմտյան մասում գտնվող բլրին, ծովի մակարդակից 1400 մ բարձրության վրա պահպանվել է Փանազկերտի ամրոցը (72:46 մ): Այն Հայկական լեռնաշխարհի բազմադարյան հարուստ ամրաշինական ավանդույթները կրող կառույց է: Ամրոցը տեղակայված է բնակավայրի մտակա բլրի վրա, որն ունի տարածադիրտական կարևոր նշանակություն, իսկ բլուրը, իր հերթին, ամրոցին տալիս է բնական անմատչելիություն: Մեր օրերում ամրոցից մնացել են բլրի եզրը շրջապատող պարսպի բեկորները: Պարսպի մեծ մասը հիմնահատակ ավերված է: Պահպանված են ամրոցի երկու աշտարակները, որոնցից մեկը բավականին լավ վիճակում, երկրորդը՝ կիսավեր: Ամրոցի ներսում, ցավոք, ոչինչ չի պահպանվել: Պարիսպը կառուցված է անմշակ ու կիսամշակ քարերով և կրաշաղախով: Պարսպի առավելագույն բարձրությունը հասնում է 7 մետրի:

Առանձնահատուկ հիշատակման է արժանի ամրոցի կենտրոնական հատվածում առկա աղբյուրը, որի կողքին աճել է մի բարձր ծառ: Աղբյուրի առկայությունը կենսական նշանակություն ունի ամրոցի համար, թեև քիչ կան պահպանված այնպիսի ամրոցներ, որտեղ առկա են ինքնաբուխ աղբյուրներ:

Ներքին Փանազկերտում պահպանվում են նաև եկեղեցու մնացորդներ, որի պատերը ներկառուցված են մզկիթի մեջ: Այս շինության արևելյան պատին զետեղված է հայերեն արձանագրությամբ քար (չորս տողից կազմված արձանագրությունը գտնվում է զետնից մոտ 1,5 մետր բարձրության վրա): Արձանագրությունն ամբողջությամբ չի պահպանվել, քանի որ մասամբ ծածկված է ավելի ուշ շրջանում արված ցեմենտային ծեփով: Հայերեն արձանագրության առկայությունը թույլ է տալիս պնդել, որ եկեղեցին պատկանել է Հայ Առաքելական եկեղեցուն: Այս պնդման օգտին են վկայում նաև XVI

դարավերջի օսմանյան հարկացուցակներում առկա տեղեկությունները, որոնք վկայում են Վերին և Ներքին Փանազկերտ գյուղերում բազմաթիվ հայերի առկայության մասին [13, էջեր 370, 372]: Փանազկերտում գոյություն ունեցած եռախորան հայկական տաճարի մասին է վկայում նաև Է. Թաղաիշվիլին [14, էջ 71]: Ըստ նրա՝ եկեղեցու հյուսիսային և արևմտյան պատերն ամբողջությամբ մզկիթի մաս են կազմում: Եկեղեցին մասամբ կառուցված է եղել սրբատաշ քարից: Թաղաիշվիլին ևս հիշատակում է արևելյան պատի անկյունում պահպանված քառատող հայերեն արձանագրությունը, որի լուսանկարն ինքը ժամանակին ուղարկել է Ն. Մառին: Բացի վերոնշյալներից՝ Է. Թաղաիշվիլին խոսում է նաև եկեղեցու արևմտյան պատի վրա պահպանված հայատառ արձանագրությամբ խաչքարի մասին, որը, ցավոք, այսօր չկա:

Մզկիթի վերածված եկեղեցին արտաքինից ուղղանկյուն կառույց է եղել: Ինչպես երևում է պահպանված պատերից՝ այն մի քանի անգամ վերակառուցման է ենթարկվել: Որմնաշարի անկյունային մասերը ինչպես նաև փակված հյուսիսային մուտքի անկյունային պատասխանատու հատվածներ շարված են մաքրատաշ, կանոնավորին մոտ քարերով, իսկ որմերի մնացյալ մասերը լրացվել են անտաշ քարերով: Որպես կապակցանյութ՝ սկզբնական կառույցում օգտագործվել է կրաշաղախ, սակայն հետագայում կավաշաղախ է օգտագործվել, իսկ վերջին տարիներին՝ ցեմենտ ավազային շաղախ, որից էլ տուժել են եկեղեցու հարավարևելյան անկյան մոտ գտնվող հայատառ գրությունները:

Վ ա չ է ձ ո ր

Տայքի ճակք գավառի Նիագոմ գյուղի այգիներում է գտնվում Վաչեձորի վանական փառահեղ համալիրը: Նիագոմ գյուղից (այժմ՝ Keçili) մինչև Վաչեձորի վանական համալիր հեռավորությունն ընդամենը 3 կմ է, սակայն այդ ճանապարհը խիստ դժվարանցանելի է, ուստի այնտեղ հասնելու համար ստիպված էինք շրջանցել Նիագոմ գյուղը, իջնել Տայոցքար գետակի ափով դեպի այն վայրը, որտեղ Նիագոմ գյուղից եկող առուն միախառնվում է Տայոցքարին: Այս հատվածից նեղ կիրճով դեպի Վաչեձորի վանք ձգվող ճանապարհը ևս խիստ դժվարանցանելի է, չնայած մի փոքր ավելի կարճ՝ շուրջ 1,5 կմ: Առվակին զուգահեռ ճանապարհը երկու կողմից շրջապատված է բարձր ժայռերով և բլուրներով, մերթ տանում է ժայռի բերանով, մերթ՝ առվակի միջով, երբեմն ստիպված էինք լինում քայլել խիտ թփուտների միջով:

Ճանապարհից ձախ՝ լեռան գագաթին է գտնվում Նիագոմի բերդը: Տեղաբնիկները բերդն անվանում են ուղղակի «քալե» (թուրքերեն՝ «բերդ») կամ «Վանքի բերդ»: Ըստ Է. Թաղաիշվիլու, հնարավոր է՝ բերդը նույն ինքը Կաղամախի բերդն է, որը հիշատակվում է հայկական և վրացական միջնադարյան սկզբնաղբյուրներում: Իր այդ տեսակետը Թաղաիշվիլին հիմնավորում է այն փաստով, որ XIX դարում տեղաբնիկները բերդը «Կալմախ-կալա» էին անվանում [14, էջ 55]:

Նիագոմի բերդի բարձր պարիսպը շրջապատում է ժայռի եզրը, մուտքն արևմուտքից է: Երեք կողմից ժայռերով շրջապատված ամբողջ եռանկյունաձև է՝ հարմարեցված տեղանքին: Պահպանվել են դարպասը, ջրի ժայռափոր մեծ ամբարը և երկու փոքր համալիր շինություններ՝ ընդհուպ մինչև հիմքը քանդված: Արձանագրություններ

հայտնաբերված չեն: Պահպանված պատերի բարձրությունը մինչև 10 մետր է: Բերդը կառուցված է կոպիտ քարով և կրաշաղախով:

Վաչեձորը Ճակքի նշանավոր վանական համալիրներից է և հանդիսացել է նրա գլխավոր հոգևոր կենտրոններից մեկը: Տեղաբնիկներն այսօր էլ այս բացառիկ հուշարձանն անվանում են «Վանք», մանրամասն գիտեն տեղանքի հետ կապված և սերնդեսերունդ փոխանցվող լեգենդներն ու ավանդազրույցները, ինչը վկայում է այն մասին, որ տեղաբնիկների նախնիները եղել են հայեր, հնարավոր է՝ քաղկեդոնական, որոնք XVII դարի կեսերին ենթարկվելով բռնի իսլամացման, միառժամանակ շարունակել են օգտագործել հայերենը, իսկ ցայսօր մասամբ պահպանում են հիշողությունը նախնիների կրոնական ու էթնիկ ինքնության մասին: Դրանում հասցրինք համոզվել նաև տեղի տարեցների հետ կարճ զրույցների ընթացքում:

Վանական համալիրը գտնվում է բերդից մոտ 700 մ դեպի հյուսիս՝ ձորի խորքում: Վանքի տարածքում էր գտնվում Նիագոս գյուղի ձմեռանոցը, այնինչ ներկայիս գյուղը ծառայում էր որպես ամառանոց: Պահպանվել են վանական համալիրի գլխավոր տաճարը, 7 փոքր եկեղեցիներ, սեղանատունը, զանգակատունը և այլ շինություններ, որոնք օսմանյան տիրապետության շրջանում օգտագործվել են իբրև գում, հարդանոց կամ մարագ:

Վաչեձորի վանքը բաղկացած է երկու հիմնական մասից: Գլխավոր եկեղեցին խաչաձև կենտրոնագմբեթ տիպի եկեղեցի է, գտնվում է ծովի մակարդակից 1260 մ բարձրության վրա: Այն նվիրված է եղել Սուրբ Ստեփանոս Նախավկային [14, էջ 56] և կառուցվել է IX դարում: Եկեղեցու պատերին տեղ-տեղ պահպանվել են որմնանկարներ: Գլխավոր եկեղեցուն հետագայում հաջորդաբար արևմուտքից կցվել են կրկնահարկ գավիթն ու զանգակատունը: Զանգակատանը հարավ-արևելքից կցված փոքր եկեղեցին կոչվել է Սուրբ Աստվածածին [15, էջ 61]: Զանգակատան միայն մի մասն է պահպանվել: Արևելյան հատվածում, ինչպես նաև հարավային մասում կան այլ կառույցների ավերակներ: Գլխավոր եկեղեցուն կից գավթի ներքին հատվածները երկար տարիներ օգտագործվել են որպես բնակելի համալիր, հետագայում՝ որպես անասնագոմ: Ներկայում հատակագծային հիմնական լուծումները լավ չեն հասկացվում, քանի որ կուտակվել է մի քանի մետրանոց գոմաղբի շերտ:

Համալիրի մյուս հատվածը տեղակայված է գլխավոր եկեղեցուց դեպի հարավ-արևելք: Բաղկացած է կրկնահարկ թաղակապ շինությունից, և դրան արևմուտքից կից փոքր սրահից: Ստորին հարկը հավանաբար դամբարան է եղել՝ երևույթ, որը լայն տարածում է ունեցել Տայք-Գուգարքի հայկական ճարտարապետական դպրոցում: Վերին հարկը ուղղված է արևմուտք-արևելք, սակայն խորանի բացակայության պատճառով կարող ենք ենթադրել, որ աշխարհիկ նշանակություն է ունեցել: Չնայած բավականին գեղեցիկ՝ զարգացած միջնադարին բնորոշ որմնանկարներով են պատված ներքին պատերը, սակայն գտնում ենք, որ ամենահավանական կիրառությունը՝ սեղանատունն է: Սրահը թաղակապ ծածկ է ունեցել, և արևելքից հենված է բնական ժայռին:

Ի շ ի ս ն

Օլթի և Թորթում գետերի միախառնման վայրի մոտ էր գտնվում հանրահայտ Իշխան գյուղը: Այն երեք կողմից շրջապատված էր լեռներով: Իշխանը, որը համապատասխանում է միջնադարյան աղբյուրներում հիշատակվող Իշխանաց գյուղին, եղել է Մամիկոնյանների նստավայրը: Իշխանը նաև Ներսես Գ Տայեցի կաթողիկոսի ծննդավայրն էր: Իշխանի Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 630-ական թթ. Ներսես Տայեցու կողմից, երբ նա դեռ Տայքի եպիսկոպոսն էր: Արաբական Գրիգոր Խանձթեցու աշակերտ Սաբա (Սաբան) Իշխանցու կողմից. «Աստծո կամոք Սաբանը եպիսկոպոս դարձավ Իշխանում, որը կառուցել էր երանելի կաթողիկոս Ներսեսը և որը երկար տարիներ այրի էր: Երկրորդ անգամ կառուցվեց եկեղեցին մեր երանելի Սաբայի կողմից, աստվածապաշտ թագավորների նյութական աջակցությամբ» [10, էջ 107]: Տ. Մարությանի կարծիքով՝ Սաբանի շինարարական գործունեությունն Իշխանում սահմանափակվում է վերանորոգումներով, որից հետևում է, որ տաճարի տեսքի արմատական վերափոխում չի եղել [5, էջեր 268-275]: Ժամանակին մեր կողմից իրականացրած շերտագրական ուսումնասիրությունները (իրականացրել ենք 2016 թ., երբ նորոգման աշխատանքների համար պարագծով բացվել էին տաճարի հիմքերը) հաստատում են Տ. Մարությանի այն վարկածը, որ Իշխանի տաճարը ի սկզբանե, այսինքն՝ VII դարից սկսած, եղել է խաչաձև կենտրոնագմբեթ տիպի, այլ ոչ թե շրջանց սրահով, ինչպես Չվարթնոցի և Բանակի տաճարներն են [9, էջեր 239-240]:

Իշխանի վանքում պահպանված գրեթե բոլոր արձանագրությունները վրացերեն են, բացի մի քանի հայկական տարբերակներից [6, էջ 100]: Այդ արձանագրությունները կատարվել են վերոհիշյալ վերանորոգումներից հետո՝ Տայքի քաղկեդոնականացման ժամանակաշրջանում: Ամենահայտնի հայերեն արձանագրությունը կատարված է 1006 թ. Գուրգեն Մագիստրոսի կառուցած միանավ բազիլիկ եկեղեցու բարավորի վրա: Այնտեղ ամբողջովին վրացերեն արձանագրության աջ ներքևի հատվածում առկա է հայատառ թվագրում՝ «ՀԱ ԹՈՒԻԱԿԱՆ...»: Արձանագրության վրացերեն հատվածից հայտնի է, որ եկեղեցին կառուցվել է 1006 թ., ուստի տրամաբանական է, որ հայերեն արձանագրության մեջ վնասված հատվածում եղել են «ՕԵ» տառերը:

Իշխանի եկեղեցու մեկ այլ հայկական մոտիվ է Տրդատ III Մեծի տիկնոջ՝ Աշխեն թագուհու պատկերը վրաց առաջին քրիստոնյա թագուհի Նանայի պատկերի կողքին, ինչի մասին վկայում է Է. Թադախիշվիլին [11, էջ 43]:

Որպես եկեղեցի՝ Իշխանը դադարել է գործել XVII դ. երկրորդ կեսից, Տայքի բռն մահմեդականացման գործընթացի և էթնոժողովրդագրական տեղաշարժերի արդյունքում: Թուրքերը, չկարողանալով բարձրանալ տաճարի գմբեթի վրա, «...ոմբաձգութեամբ կուրացուցին զխաչն» [3, էջ 30], որով և շինությունը ենթարկեցին նոր ավերածությունների: Իշխանի Ս. Աստվածածին եկեղեցու հարևանությամբ վերջին տարիներին իրականացված պեղումների արդյունքում հայտնաբերվել են ևս երկու եկեղեցիների հիմքեր: Ամենայն հավանականությամբ, նորահայտ եկեղեցիներից մեկը եղել է եռանավ բազիլիկ:

Այլ հուշարձաններ

Պատմական Տայքի ճակք գավառի **Արքունիս** (Արքունից) (այժմ՝ Ilıkaynak) գյուղից 1,8 կմ հարավ-արևմուտք, դժվարամատչելի ժայռի վրա գտնվող ամրոցից պահպանվում են աշտարակի բեկորներ: Աշտարակի մի կողմն ուղղանկյուն է, մյուսը՝ կոր: Պահպանվել է նաև ժայռի եզրը շրջապատող պարսպի 5 մետր բարձրությամբ հատվածը: Ամրոցի տարածքում կան նաև եկեղեցու մնացորդներ:

Պատմական Տայքի ճակք գավառի **Գեամալ** գյուղում (այժմ՝ Taşgeçit)՝ մզկիթից մոտ 100 մետր հարավ, տեղացիներից մեկի տան պատերի մեջ պահպանված են երկու խոյաձև կոթողներ, որոնք, ամենայն հավանականությամբ, եղել են միջնադարյան տապանաքարեր:

Փոքրիկ ամրոցի մնացորդներ պահպանվել են պատմական Տայքի **Քարնավազ** գյուղի (այժմ՝ Ormanağzi) մոտ գտնվող ժայռի վրա: Պարսպի պահպանված հատվածը թվում է, թե շրջապատել է ժայռի եզրը: Կենտրոնական մասում կա ջրի մեծ ամբար:

Պատմական Տայքի ճակք գավառի **Քիվ** (այժմ՝ Yıldızkaya) գյուղից 2 կիլոմետր հյուսիս-արևմուտք պահպանվում են սրահավոր եկեղեցու մնացորդներ: Եկեղեցին մեծապես վնասված է, համեմատաբար ավելի լավ է պահպանվել խորանի հատվածը: Եկեղեցու մուտքը հարավից էր: Պատերը կառուցված են անտաշ, մեծ չափերի քարերով և կրաշաղախով:

Պատմական Տայքի ճակք գավառի **Նիսագոմ** գյուղի (այժմ՝ Keçili) եկեղեցու տեղում այսօր մզկիթ է կառուցված: Եկեղեցու հյուսիսային պատն այժմ ներառված է մզկիթի մեջ: Նկատվում է սրահավոր եկեղեցու հատակագիծը, որը լուսամուտ ուներ արևմուտքում: Եկեղեցին կառուցված է եղել անմշակ և մաքրատաշ քարերի հավասար շարքերով: Պահպանված պատի բարձրությունը 4 մետր է:

Պատմական Տայքի ճակք գավառի **Նորբերդ** (այժմ՝ Köprübaşı) գյուղից 1 կմ դեպի հյուսիս-արևելք, ժամանակակից Քյոփրյուբաշը գյուղում՝ ճանապարհից ոչ հեռու՝ Օլուր գետակի ձախ ափին՝ Օլթի գետի հետ միախառնվելու վայրից մոտ 600 մետր հյուսիս, ժայռի վրա պահպանվում է գրավոր աղբյուրներից հայտնի ամրոցը: Այն գտնվում է ծովի մակարդակից 1050 մետր բարձրության վրա: Ամրոցի պարիսպները բավականին լավ են պահպանված: Մեզ են հասել պարիսպը, դարպասը, իսկ արևելյան մասում՝ օվալաձև մեծ աշտարակը: Ամրոցի կառուցման ստույգ ժամանակը հայտնի չէ: Ամրոցում կիրառված ճարտարապետական լուծումները թույլ են տալիս ենթադրել, որ այն կառուցվել է միջնադարում: Նորբերդ բնակավայրը ուշ միջնադարում եղել է հայաբնակ, ինչի մասին վկայում են նաև օսմանյան սկզբնաղբյուրները [13, էջեր 386-387]:

Պատմական Տայքի ճակք գավառի հայաշատ բնակավայրերից էր **Օլորը**, որը մինչև XX դարակիզը եղել է հայաբնակ: Դրա մասին են վկայում ինչպես օսմանյան սկզբնաղբյուրները [13, էջեր 383-384], այնպես էլ արխիվային փաստաթղթերը [12, էջեր 21-25]: Օլորն այսօր Էրզրումի նահանգի Օլուրի գավառակի վարչական կենտրոնն է: Քաղաքի վարչական շենքի բակում պահպանվել է անչափ հետաքրքիր խորհրդաբանական մեծ արժեքներով փորագրված հուշակոթողը: Ըստ տեղի բնակիչների՝ քարը բերվել

է Քարաշուտ գյուղից: Ցավոք, քաղաքի երբեմնի հայկական ներկայության վերաբերյալ, բացի տեղաբնիկների վկայություններից, այսօր մնացորդներ չկան:

Պատմական Տայքի ճակք գավառի կենտրոնում էր գտնվում **Որդից** գյուղը (այժմ՝ Eǰlek): Ըստ Ատրպետի՝ Որդիցը եղել է տոնախմբության վայր, ուր գործել է նաև տոնավաճառ [1, էջ 191]: Բնակավայրից մոտ 500 մետր դեպի արևմուտք, բարձր ժայռի վրա պահպանվել են ամրոցի մնացորդներ: Այն գտնվում է ծովի մակարդակից 1440 մետր բարձրության վրա: Ամրոցը ուղղանկյուն է, ցավոք՝ բավականին վնասված: Պահպանվել են ժայռի եզրերը շրջապատող պարսպի բեկորներ: Ամրոցի տարածքում՝ ժայռի վրա, առկա է ջրի մեծ ամբար: Ամրոցը, ամենայն հավանականությամբ, կառուցվել է վաղ միջնադարում և պատկանել է Մամիկոնյան նախարարական տան սեպուհներին: Ամրոցի տեղադիրքը չափազանց կարևոր է մարտավարական տեսանկյունից և նկատվում է բավականին հեռվից: Այդպիսի անմատչելի վայրում նմանատիպ ամրոց կառուցելը ինքնին շինարարական սխրանք է, որը պետք է որ ահ ու սարսափ տարածեր թշնամիների վրա և հիացմունք՝ տեղաբնիկների մոտ: Շինայնությունը հնարավոր էր բարձրացնել միմիայն պարանների միջոցով և տիտանական աշխատանք էր հարկավոր թեպետ փոքր, բայց տպավորիչ այսպիսի ամրոց կառուցելու համար: Հավանական ենք համարում, որ ժայռը հնում պաշտամունքի վայր եղած լինի:

Պատմական Տայքի ճակք գավառի **Օղթադար** (այժմ՝ Ekinlik) գյուղից 700 մետր հարավ-արևմուտք, խոտածածկ տարածքներում պահպանվել են եկեղեցու մնացորդներ: Տեսանելի է սրահավոր եկեղեցու հատակագիծը, տանիքը փլված է, պատերը կառուցված են անմշակ քարերով և կրաշաղախով, պահպանված պատերի բարձրությունը միջինը 1 մետր է: Պահպանվել են սալաքարերի բեկորները: Մուտք հարավից էր: Եկեղեցու որմերի քարերը պոկված հանված են, և կանգուն է մնացել հիմնականում կրաբետոնե միջուկը: Տեղի բնակչությունն այս վայրը անվանում է «Չիֆթլիկ» («ագարակ»): Մեզ հայտնի գրավոր աղբյուրներում եկեղեցին չի հիշատակվում:

Օղթադար բնակավայրից շուրջ 2 կմ հյուսիս գտնվում են նաև բերդի ավերակներ: Բերդը տեղակայված է եղել ամբողջ հովտի վրա իշխող դիրք ունեցող 2256 մետր բարձրություն ունեցող բլրի վրա: Բացառությամբ ամրոցի արևելյան հատվածի, մյուս կողմերից այն շրջապատված է ժայռերով: Պարիսպները, որոնց միայն մի մասն է կանգուն, կառուցված են խոշոր սրբատաշ քարերով, թեև տեսանելի է նաև ամրոցի կիկլոպյան շարվածքի շերտը: Ամրոցի ընդհանուր երկարությունը հասնում է 22, իսկ լայնությունը՝ 12 մետրի: Պարիսպների լայնությունը 1,2 մետր է: Ներսից նկատելի են օվալաձև և ուղղանկյունաձև ճարտարապետական կիսավեր կառույցներ: Այստեղ հայտնաբերված կերամիկական տարբեր գտածոները խոսում են ամրոցի տարածքում վաղ բրոնզի և վաղ երկաթի դարերին, ինչպես նաև միջնադարին պատկանող մշակութային շերտերի առկայության մասին:

Պատմական Տայքի ճակք գավառի **Սալաջուր** գյուղում (այժմ՝ Kekikli)՝ Նիկոլայի թաղամասում, պահպանվել են եկեղեցու մնացորդներ: Տեղի բնակչությունը հաստատում է այս վայրում եկեղեցու գոյությունը: Ըստ նրանց՝ եկեղեցու քարերը օգտագործված են գյուղի կենտրոնական թաղամասում գտնվող տների պատերի մեջ: Մեզ հայտնի

գրավոր աղբյուրներում եկեղեցին չի հիշատակվում: «Նիկոլայ» անվանումը կապված է ռուս զինվորականի հետ: Այստեղ՝ եկեղեցու մոտ, կա հին ռուսական դպրոցի շենք: Կենտրոնական թաղամասում՝ Սզկիթի վերևում, կա մեկ այլ շինություն, որը որոշ տեղաբնիկների կողմից անվանում է եկեղեցի: Պահպանված կառույցի՝ հավանաբար եկեղեցու որմերը իրականացված են բավականին մաքուր տաշված և կանոնիկ քարերից, վերին հատվածը վերակառուցված է ամբողջությամբ:

Պատմական Տայքի Ճակք գավառի **Տայոցքար** բնակավայրը (այժմ՝ Çataksu) գտնվում է Օլթի գետի և նրա վտակ Տայոցքարի միախառնման վայրից 5 կմ հեռավորության վրա, Տայոցքար վտակի ափին: Գյուղի այգիներում պահպանվել են գրավոր աղբյուրներից հայտնի երկու եկեղեցիներ: Դրանցից մեկը կենտրոնագմբեթ բազմանկյուն տիպի ութանկյուն եկեղեցի է, որը բավականին վնասված է հասել մեր օրերը, գմբեթը՝ փլված: Պահպանված պատերի բարձրությունը հասնում է 3 մետրի: Եկեղեցին կառուցված է մաքրատաշ, սակայն փոքր և միջին քարերից, որը բնորոշ է տվյալ գավառին: Տայոցքարի այս բազմախորան եկեղեցին գավառի առանցքային կառույցներից մեկն է եղել, ցավալի է, որ բավականաչափ լավ չի պահպանվել ամբողջական կերպարային հետազոտություն անելու համար: Այս կառույցին դեռևս 1906 թ. Թ. Թորամանյանը ուշադրություն է դարձրել՝ նշելով «Թավուզյարի» եկեղեցու մասին, որը, ըստ իրեն հասած տեղեկությունների, Զվարթնոցի նման է և, հավանաբար, Ներսես Գ-ի 7-րդ դարի շինություն է [2, էջ 25]: Վերակազմության տարբերակներ են առաջարկում Ա. Կալգինը, Ս. Մարությանը [4, էջեր 151-152], սակայն ուղղահայաց կերպարային, ինչպես նաև եկեղեցու թվագրության հարցերը առ այսօր մնում են բաց:

Երկրորդ եկեղեցին գտնվում է նրանից 20 մետր հարավ: Եկեղեցու արևմտյան խաչքերը խիստ ձգված է: Խաչաձև հատակագիծը նաև շեշտում են հյուսիսային և հարավային կարճ խաչքները: Ամենայն հավանականությամբ՝ եկեղեցին գմբեթավոր է եղել, կառուցված է կիսամշակ քարերով և կրաշաղախով:

Պատմական Տայքի Ճակք գավառի երբեմնի հայաբնակ [13, էջ 375] **Բրտանոց** (այժմ՝ Beğendik) գյուղից 1,5 կիլոմետր հյուսիս-արևմուտք, գրավոր աղբյուրներից հայտնի աշտարակաձև ամրոց է պահպանվել ժայռի վրա: Կառույցի պատերը կառուցված են անմշակ քարով և կրաշաղախով: Այն երեք կողմից ուղղանկյուն է, մի կողմը՝ կլորացված: Աշտարակի պատերին կան ճեղքեր: Ենթադրվում է, որ աշտարակի մուտքը հարավ-արևմուտքից էր: Աշտարակավոր ամրոցի տեղադիրքը, քարքարուտ զագաթը և կառույցի ստորին շարքերի՝ խոշոր անմշակ քարերից իրականացված լինելը մեզ հուշում է վաղ միջնադարյան շրջանի մասին:

Պատմական Տայքի Ճակք գավառի **Խոշվանք** (այժմ՝ Yeşilbağlar) գյուղից 1,5 կիլոմետր դեպի հյուսիս կա մի սրահավոր եկեղեցի: Եկեղեցու տանիքը փլված է, պահպանվել են խորանը՝ իր գմբեթարդային ծածկով, հյուսիսային պատը և մասամբ՝ հարավային պատի բեկորները: Պահպանված պատերի առավելագույն բարձրությունը հասնում է 5 մետրի: Եկեղեցին կառուցված է կիսամշակ և մաքրատաշ փոքր ու միջին չափերի քարերով: Տեղի բնակչությունն այս վայրն անվանում է «Խոշնավազ»: Տեղաբնիկների պնդմամբ եկեղեցին պատկանել է հայերին: Գյուղում հայկական բնակչության առկա-

յության մասին են վկայում XVI դարավերջի օսմանյան հարկացուցակները [13, էջեր 391-392]: Գյուղի տարեցները ևս վկայում են, որ եկեղեցին պատկանել է գյուղում բնակված հայերին: Գյուղի հովիվ Ջենգիզ Յըլդըրընը վկայում է, որ հիշում է եկեղեցու գմբեթը (հավանաբար նկատի ունի թաղակապ ծածկը), որը, ցավոք, այսօր փլվել է գերազանցապես գանձագողերի բարբարոսական գործունեության հետևանքով [8]:

Պատմական Տայքի Ճակք գավառի Իշխան գյուղից 4 կմ հյուսիս պահպանվում է ավերակ եկեղեցի: Եկեղեցին, որը հայտնի է **Սուրբխաչ** (Մբխեչ) անունով, ամենայն հավանականությամբ, կառուցվել է VI դարում: Գտնվում է ծովի մակարդակից մոտ 1700 մետր բարության վրա: Եկեղեցին կենտրոնագմբեթ քառախորան տիպի է, որտեղ բոլոր չորս խորաններն էլ նույնիսկ արտաքինից կիսաշրջան ելուստով են իրականացված: Կառույցին հավանաբար հետագայում կցվել է գավիթանման ուղղանկյուն սրահը: Ըստ Տ. Մարությանի՝ Սուրբխաչ եկեղեցին իր հորինվածքով գրեթե ամբողջությամբ կրկնում է Ծովիզի եկեղեցու հորինվածքը [4, էջ 126]:

Պատմական Տայքի Ճակք գավառի **Էրքինիս** (այժմ՝ Demirkent) գյուղից 6 կիլոմետր դեպի արևելք պահպանվել է գրավոր աղբյուրներից հայտնի ամրոց՝ 150x70 մետր չափերով: Ամրոցը կառուցված է մի փոքրիկ ժայռի լանջին: Պահպանվել են պատերի և դարպասների բեկորներ: Կա կարծիք, որ ամրոցը համապատասխանում է դեռևս VIII դարից հայտնի Թուխարք ամրոցին: Ավելի հավանական է, որ ամրոցը դեռևս IV դարից հիշատակվող Էրախանին է [7, էջեր 198-199]: Այս վարկածի օգտին է խոսում նաև ամրոցին մոտ գտնվող բնակավայրի Էրքինիս անվանումը, որը Էրախանի անվան ձևախեղված տարբերակն է: Ամրոցը տպավորիչ տեղադրիք ունի, հեռվից ընկալվում է անբաժան ժայռից: Կառուցված է բավականաչափ անմատչելի տեղում, Տայքին բնորոշ ոճով:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Պատմական Տայքը, լինելով հայոց պետականության կարևորագույն գոյատևածքներից մեկը, առանձնանում է նրանով, որ այստեղ միջնադարում լայն տարածում ստացավ քաղկեդոնականությունը, ինչն իր կնիքը թողեց երկրամասի էթնոդավանական ու ժողովրդագրական գործընթացների վրա: IX-XI դարերում հայ առաքելական վանական համալիրների մեծ մասը վերածվեց վրացական ծեսով ուղղափառությունը որդեգրած մենաստանների, որոնց կողքին ի հայտ եկան նաև նորակառույց հայ քաղկեդոնական համալիրներ: Այս գործընթացը դրսևորվեց նաև Տայքի Ճակք գավառում: Այստեղ ցայսօր պահպանվում են ինչպես հայ քաղկեդոնական, այնպես էլ հայ առաքելական բազմաթիվ հուշարձաններ, որոնց մեծ մասը, ցավոք, գտնվում է անմխիթար վիճակում: Այդ հուշարձանների մի զգալի մասը հայագիտության մեջ ոչ միայն չի ուսումնասիրվել, այլև առհասարակ հայտնի չէ: Գավառի տարածքում բազմաթիվ միջնադարյան բերդերի և ամրոցների առկայությունն էլ իր հերթին վկայում է Հյուսիսային Հայաստանի պաշտպանական համակարգում Ճակքի կարևորագույն դերի մասին:

Գրականություն

1. Ատրպետ: *Ճորոխի ավազանը*: Վիեննա. Մխիթարյանների տպարան: 1929: 238 էջ:
2. Թորամանյան Թ. *Նյուֆեր հայկական նարտարապետության*: Երևան: Արմֆան: 1942: 404 էջ:

3. Ինճինեան Ղ., *Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի: Մաս Ա, հ. Ա*: Վենետիկ: Սուրբ Ղազար: 1806: 38+424 էջ:
4. Սարուբյան Տ. *Խորագոյն Հայք*: Երևան: Սովետական գրող: 1978: 183 էջ:
5. Սարուբյան Տ. *Հայ դասական նարտարապետության ակունքներում*: Երևան: «Մուղնի» հրատ.: 2003:
6. Սարգիսեան Ն. *Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս*: Վենետիկ: Սուրբ Ղազար: 1864: 289 էջ:
7. Փավստոս Բուզանդ: *Պատմութիւն Հայոց*: Թիֆլիս: Գալստեանի տպարան: 1912: 407 էջ:
8. Ermeni Kilisesinin İki Duvarı Kaldı// <https://www.haber3.com/guncel/ermeni-kilisesinin-iki-duvari-kaldi-haberi-2640844> (viewed 25.03.2023).
9. Nahatkyan D. *New Researches about Stratigraphic Issues of the Temple Ishkhan* // <<Պատմա-Պատմագրություն>> 4th International conference. Abstracts of papers. Tbilisi. 2016, 239-240 pp..
10. Георгий Мерчуле. *Житие Григория Хандзтийского*. Перевод Н. Я. Марра, с дневником поездки в Шавшию и Кларджию. Санкт-Петербург. 1911.- LXX+151+216 с.
11. Такайшвили Э. *Археологическая экспедиция 1917г. В Южные провинции Грузии*. Тбилиси: издательство АН ГССР. 1952. 289 с.
12. Центральный Государственный Исторический Архив Грузии, фонд 12, опись 7, дело 3950.
13. *Գեորգիսեանի շրջանի մասին ծանուցումներ*. Գ. 2. տურքული ტექსტი გამოსცა, თარგმანი, გამოკლევა და კომენტარები დაურთო სერგი ჯიქიამ. თბილისი: საქართველოს აკადემიის გამომცემლობა, 1941.- 503 გვ., Գ. 3, თბილისი, 1958.- 660 გვ.
14. თაყაიშვილი ე. *არქეოლოგიური ექსპედიცია კოლა-ოლთისში და ჩანგლში 1907 წელს*. პარიზი: 1938. 87 გვ.
15. *Պատմա-գեոգրաֆիկ: ისტორիისა და կულտურის ძეგლების կատաლოგი*, რედ. Զ. Կուդազա, თბილისი: გამომცემლობა არტანუჯი. 2017. 600 გვ.

References

1. Atrpet. Chorrokhpp. basin [*Tworoxi avazany*]. Vienna: Mkhitaryans printing house. 1929. 238 p. (in Armenian)
2. Toramanian T. Materials of the History of Armenian Architecture [*Nyut'er haykakan chartarapetut'yan*]. Yerevan: Armfan, 1942. 404 p. (in Armenian)
3. Inchijian G., Geography of the Forth Part of the World [*Ashxarhagrowth'yun choric masanc ashxarhi*]. Part 1, vol. A, Asia. Venice: Saint Lazarus. 1806. 38+424 p. (in Armenian)
4. Marutyan T. Deeper Armenia [*Xoraguyun Hayq*]. Yerevan: «Sovetakan grogh.» publ. 1978. 183 p. (in Armenian)
5. Marutyan T. In the origins of Armenian classical architecture [*Hay dasakan twartarapetut'yan akunqnerum*]. Yerevan: "Mughni" publishing house. 2003. (in Armenian)
6. Sargisian N. Topographies of the Minor and Mayor Armenia [*Teghagrut'yunq i P'oqr ev i Mec' Hays*]. Venice: Saint Lazarus. 1864. 289 p. (in Armenian)
7. Pavstos Buzand. History of Armenia [*Patmut'yun Hayoc*]. Tiflis. Galstyan printing house. 1912. 407 p.(in Armenian)
8. Ermeni Kilisesinin İki Duvarı Kaldı// <https://www.haber3.com/guncel/ermeni-kilisesinin-iki-duvari-kaldi-haberi-2640844> (viewed 25.03.2023).
9. Nahatkyan D. New Researches about Stratigraphic Issues of the Temple Ishkhan // «Պատմա-Պատմագրություն» 4th International conference. Abstracts of papers. Tbilisi. 2016, 239-240 pp..

10. Georgi Merchule. Life of Gregory of Khandzta [Zhitie Grigorija Handztijskogo]. Translated by N. Marr. With a diary of a trip to Shavshia and Klardzhia. St. Petersburg. 1911.-LXX+151+216 p. (in Russian)
11. Takayshvili E. Archeological Expedition of 1917 In the Southern Provinces of Georgia [Arheologicheskaja jekspedicija 1917 g. v Juzhnye provincii Gruzii]. Tbilisi: publication of Academy of Sciences of Georgian SSR. 1952. 289 p. (in Russian)
12. Central State Historical Archive of Georgia, fund 12, description 7, case 3950.
13. Grand Register of the Province of Gurjistan [Gurjist'anis vilaietis didi davtari]. Book 2. Turkish text publication, translation, addition and comments were added by Sergi Jikia. Tbilisi: publication of Academy of Sciences of Georgian SSR. 1947. 503 p. (in Georgian)
14. Takaishvili E. Archaeological expedition to Kola-Oltisi and Changli in 1907 [Arkeologiuri eksp'editisia Kola-Oltisshi da Changlshi 1907 ts'els]. Paris: 1938. 87 p. (in Georgian)
15. Tao-Klarjeti: Catalog of Historical and Cultural Monuments [T'ao-K'larjeti: ist'oriisa da k'ult'uris dzelebis k'at'alogi]. Ed. by B. Kudava. Tbilisi: Artanuji publishing house. 2017. 600 p. (in Georgian)

Ընդունվել է / Принята / Received on: 27.03.2023

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: 24.04.2023

Հանձնվել է տպ. / Сдана в пч. Accepted for Pub: 10. 06.2023

Տեղեկություններ հեղինակների մասին

Արկադի Ա. ԱԿՈՊՎ՝ պատմ. գիտ. թեկնածու, ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտքարտուղար, Գյումրի, ՀՀ,
էլ. huugit`arkadone1@gmail.com, <https://orcid.org/0000-0001-6771-9747>

Դավիթ Ս. ՆԱՀԱՏԱԿՅԱՆ՝ նարտ. թեկնածու, ՃԾՀԱՀ-ի նարտարապետության տեսության և պատմամանրաբանական ժառանգության վերականգնման ամբիոնի ասիստենտ, ՀՀ ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի գիտաշխատող, Գյումրի, ՀՀ
էլ. huugit`davit.nahatakan@gmail.com, <https://orcid.org/0000-0003-1149-7262>

Սոֆյա Պ. ՀԱԿՈԲՅԱՆ՝ արևելագետ, թուրքագետ, Երևան, ՀՀ,
էլ. huugit`agopyan.sofia@gmail.com, <https://orcid.org/0009-0008-5138-619X>

Arkadi A. АКОПОВ: PhD in History, scientific secretary of the SCAS NAS RA,
e-mail: arkadone1@gmail.com, <https://orcid.org/0000-0001-6771-9747>

Davit S. НАНАТАКЯН: PhD in architecture, assistant professor in NUACA,
Researcher of Shrak Center for Armenological Studies NAS, Gyumri, RA,
e-mail: davit.nahatakan@gmail.com, <https://orcid.org/0000-0003-1149-7262>

Sofya P. НАКОВЯН: orientalist, Turkologist, Yerevan, RA,
e-mail: agopyan.sofia@gmail.com, <https://orcid.org/0009-0008-5138-619X>

Аркадий А. АКОПОВ: кандидат истор. наук, ученый секретарь
Ширакского центра арменоведческих исследований НАН, Гюмри, РА,
эл. адрес: arkadone1@gmail.com, <https://orcid.org/0000-0001-6771-9747>

Давид S. НААТАКЯН: кандидат архитектуры, доцент НУАСА,
научный сотрудник Ширакского центра АИ НАН, Гюмри, РА,
эл.адрес: davit.nahatakan@gmail.com, <https://orcid.org/0000-0003-1149-7262>

Софья П. АКОПЯН: востоковед, тюрколог, Ереван, РА
эл. адрес: agopyan.sofia@gmail.com, <https://orcid.org/0009-0008-5138-619X>